CARD AgroService
NEWSLETTER

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԹԻ ՍԱՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՃԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՑՈՒՑԱՆԻՇՈՎ

2013թ-ի դեկտեմբերին, «ԴեԼավալ» ընկերության՝ Ուկրաինայի, Մոլդովայի և Հարավային Կովկասի Հանրապետությունների ներկայացուցիչները (դիլերները) Կիևում մասնակցեցին «ԴեԼավալ»-ի Ներկայացուցիչների Կոնֆերանսին:

Մեր կազմակերպության կողմից միջոցառմանը մասնակցում էր Գյուղ. սարքավորումների վաճառքի և խթանման գծով մենեջեր Արեգ Գեղեոնյանը:

Հինգ երկրների կաթ արտադրող արդյունավետ և զարգացող տնտեսություններից ժամանած ներկայացուցիչները ֆորումի ընթացքում քննարկեցին և ամփոփեցին 2013թ.-ի հաջողություններն ու մարտահրավերները, որոնք առնչվում են կթի սարքի տրամադրման գործընթացին:

Միջոցառմանը ՔԱՐԴ ԱգրոՍերվիս ՓԲԸ-ն արժանացավ 2013 լավագույն ներկայացուցիչ տիտղոսին՝ ցուցաբերած աճի առավելագույն ցուցանիշների և «ԴեԼավալ»-ի լուծումները ներկայացնելու նպատակով Հայաստանյան շուկայի ներուժը զարգացնելու համար:

Այս պարգևատրումը հնարավոր դարձավ և՛ CARD-ի աշխատակիցների շնորհիվ, որոնք այս տարիների ընթացքում նվիրաբար մեծ ջանք են գործադրել, և՛ Հայաստանի բոլոր մարզերի ֆերմերների շարունակական աջակցության և ոգեշնչման շնորհիվ:

100-ՐԴ ԿԹԻ ՇԱՐԺԱԿԱՆ ԱԳՐԵԳԱՏԸ ԳՏԱՎ ԻՐ ՏԻՐՈՋԸ

2013թ-ը ՔԱՐԴ ԱգրոՍերվիս ՓԲԸ-ի համար դարձավ հիշարժան մեկ այլ հետաքրքիր նվաճումով: 100-րդ կթի շարժական ագրեգատը հերթական անգամ պետք է տրվեր լիզինգով, երբ ընկերությունը որոշեց նվիրել դա այն համայնքի ֆերմերին, որտեղ մեքենայացված կթի մակարդակն առավել բարձր է:

Հաղթող ճանաչվեց Նորայր Ալեքսանյանը՝ Սառնակունք գյուղի ֆերմեր, 5 երեխաների հայր և 8 կաթնատու նախրի տեր: «Սա մեծ օգնություն էր մեզ համար, որը հնարավորություն կտա մի քիչ ավելի ազատ ժամանակ անցկացնել ընտանիքի հետ», ասաց Նորայրը, երբ ստանում էր սարքի շահագործման և սպասարկման մանրամասն ցուցումներ:

Շարժական կթի սարքերը մեծ կարևորություն և պահանջարկ ունեն Հայաստանի կաթ արտադրող տնտեսություններում:

Դրանք ոչ միայն կրճատում են գյուղացու ծանր աշխատանքը, այլև ամենակարևորը միտված են բարելավելու կթի հիգիենան և սանիտարական պայմանները ֆերմաներում:

Հայաստանում CARD-ը ներկայացրել է կթի տեխնոլոգիան «ԴեԼավալ»-ի մասնագետների հետ համատեղ սկսած 2006թ-ից: Սիսիանի տարածաշրջանի առաջին ֆերմերները մեքենայացված կթի տեխնոլոգիան սկսեցին կիրառել 2009թ-ի վերջին: Հաջողությունը շուտով տարածվեց ամբողջ շրջանով և 4 տարի անց, 2013-ին, «ԴեԼավալ» ընկերության կողմից արտադրվող կթի ագրեգատներն արդեն կիրառվում էին տարածաշրջանի բոլոր գյուղերում ի շնորհիվ Սառնակունք գյուղում հիմնված Գյուղատնտեսական և Անասնաբուժական Սպասարկման Կենտրոնի (ԳԱՍԿ):

Կենտրոնի մենեջեր Սուրեն Վարդանյանը փորձառու անասնաբույժ է, որը մատուցում է կենդանիների արհեստական սերմնավորման և կաթ արտադրող տնտեսության հետ կապված այլ ծառայություններ: Հարկ է նշել, որ նրա շնորհիվ էր նաև, որ կթի շարժական ագրեգատները մեծ ճանաչում գտան տարածաշրջանում:

Այսօրվա դրությամբ, շատ մոտ ենք նվիրաբերելու 200-րդ կթի սարքը Սիսիանի տարածաշրջանում: Այսպիսով, շուտով կնշենք մեր հաջորդ նվաճումը, այս անգամ արդեն մեկ այլ տնտեսությունում:

AgroService CARD
1/21 Azatutyan Ave., Yerevan 0037, Armenia
Tel. (374 60) 440-550
E-mail: card@card.am; Website: www.card.am